

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ համար 8 ՄԷՃ
Պատահաց 40 ՄԷՃ
Վեցամեկուկու Պոլսոյ 4 ՄԷՃ
Պատահաց 3 ՄԷՃ
Եւրոպայի թերթի գին 60 գրդ
Գանձեցման տուրք մէկ անգամի հա-
շար 3 դուրուշ, արկու անգամի հա-
շար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ անկարգութիւն կըլլայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՄԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Գործը զարգացնելու համար
նորոգել խմբագրութեան սրահը
Լրագրոյս վերանորոգման համար
կամ որ եւ իցէ գ, որ թիւ և թարգմտի
—Տնօրէնին պիտի ուղարկուի 40
լիւ, 200 թիւ խան, Կարաթի գրասեն-
տակը:
Համար ծախքը չգնաւուած եւս
հակ չընդունուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼՈՐՏ ՊԵՐՊԻՒ ԱՏԵՆԱԹՕՈՒԹԻՒՆԸ

Հեռագիրն անցեալ շաբթու Անգ-
ղիոյ աշտարակն գործող նախարար
Լորտ Տէրպի խօսած մէկ ատենարա-
նութեան համառօտ իմաստը բերած
էր, որոյ մէջ Արեւելեան խնդրոյն
նկատմամբ ալ կարեւոր յայտարարու-
թիւնք կային:

Ահաւասիկ յիշեալ ատենարանու-
թեան բուն խօսքերն:

«Օտար երկիրներու հետ մեր
յարաբերութեանց մասին, որոց հա-
մար աւելի յատկապէս պատասխա-
նատու եմ, կ'սպասէք որ բոլորովին
լուռ չկենամ: Կրնամ ճշմարտու-
թեամբ ըսել թէ այդ մասին ունեցած
լուրերու գոհացուցիչ են: Տարակոյտ
չկայ թէ կը դառնան այնպիսի բա-
նէր, որոց արդի կերպ ըլլալն աւելի
հաճոյական էր. արդարեւ հաճելի չէ
խորհիլ թէ եւրոպիոյ զինուորական
չորս մեծ պետութիւնք այսօրուան
օրս եօթն միլիոնի չափ մարդ ունին
պատերազմի համար կրթուած և կըր-
թուելու վրայ, և կը կարծեմ թէ
այս ցուցած հաշիւս ներկայ իրակա-
նութենէն պակաս չէ: Ուստի մեր
աղաատական և խաղաղասիրական
նօթութեանց հետ ճշդիւ համա-
ձայնիր այս իրողութիւնը թէ եւրո-
պիոյ ցամաք երկրին մէջ այսօր հա-
զիւ մարդ մը կայ զինուորական հա-
սակի տէր, որ իւր տունէն ու զրա-
ղումներէն կարճ պայմանաժամով
չկորցուի և իւր երկրէն հեռի եր-
կիրներու մէջ պատերազմելու չըր-
կուի, որովհետեւ իւր կառավարու-
թիւնն ուրիշ կառավարութեանց հետ
վէճի մը բռնուել է, որուն հիմը
հաւանականաբար բնաւ չգիտեր ին-
քը: Ստուգելու այս վիճակը քաղա-
քակրթական յառաջդիմութեան
դերազանց տալիս մը չէ: Բայց այդ
զօրութեանց կանգուն կենսային չհե-
տեւի որ անպատճառ պիտի գոր-
ծածուին: Խաղին մէջ գրեւոր գրա-
մագրութեան մեծութիւնն ամե-
նէն քաջատիրա խաղցողներն իսկ խո-
հեմութեան կը հարկադրէ: Պատե-
րազմի պատրաստութիւնները թէպէտ
և ահագին են, — և դուցէ պատե-
րազմի դէմ նախադուշութիւնք
կրնան կոչուիլ, — բայց զանաք գոր-
ծածել ուղեւոր նշան մը չեմ տեսներ:

«Ես կը հաւատամ որ եւրոպիոյ
կառավարութիւնք խաղաղութեան
կը բաղձան, և ուր որ խաղաղու-
թիւնն անվրդով պահելու բաղձանք
կայ, հոն կրնայ ընդհանրապէս ան-
վրդով պահուիլ: Այս միջոցիս մեր
առջի խնդիր մ'ունինք, որոյ վեր-

ջին խօսքն հաւանականաբար առ-
կաւին երկար ժամանակ չպիտի տըր-
ւի մեզ, խնդիր մը, որոյ վերջնա-
կան լուծումն ոչ ոք կրնայ յատկ
կերպիւ նախատեսել, և որոյ համար
կը կարծեմ թէ առ այժմ բան մը
հնարաւոր չէ, եթէ ոչ ժամանակիս
պահանջմանց դէմն առնուլ սահման-
եալ առժամանակեայ միջոցներ: Դուք
ալ ինձ չափ դիտէք իրաց վիճակը:
Թուրքիոյ գաւառաց մէջ ապստամ-
բութիւն մը ծագեցաւ, որ օտար
տէրութիւններէն չքաջալերուելուն
համար ի սկզբան տկար էր, և ա-
րագ գործողութեամբ մը կրնար դի-
րաւ զսպուիլ, բայց բաւի տեղ չը
գրեւեցաւ մինչև որ մեծցաւ: Կը
թուէր իսկ թէ տեղի պիտի տար
երբոր վերջապէս զսպուական միջո-
ցներ գործածուեցան: Ասկէց երեք
ամիս առաջ՝ ամենէն լաւ ծանօթու-
թիւնն ունեցող անձինք մեծ մասամբ
կը կարծէին թէ ապստամբութիւնը
չպիտի կրնար շատ ծաւալիլ, ոչ ալ
երկար տևել: Բայց երկուսն ալ տա-
նալ մը վրայ եկան՝ վարչական սխա-
լանաց և երկարատեւ վատնութեանց
արդիւնք: Եւստի յայտարարութիւն
մը, որով Դուք կը յայտնէք թէ իւր
տեղիներուն կէտէն աւելին չպիտի
կրնար վճարել: Այս պարագայն ըր-
նակաւարար Թուրքիոյ բարեկամնե-
րը վճարեցուց և թշնամիները քա-
ջալերեց: Ապստամբութիւնն աւելի
մեծցաւ, և թէպէտ այսօր ալ ահա-
ւոր բան մը չէ զինուորական միջո-
ցներու կողմէ, և ապստամբաց տա-
րած յաղթութիւններուն մեծ մասը
զոր լրագրէք կը ծանուցանեն մեզ,
չափազանցութիւններով լի են, բայց
և այնպէս դրացի ժողովրդեան մէջ
մտաց գրգռութիւնն այնչափ մեծ
է, որ մարդ չկրնար անկասկած ըր-
լալ թէ պատերազմին ստպարէզն ան-
սահմանաբար չպիտի ընդարձակի:
Ես կը հաւատամ թէ Աւստրիոյ և
Ռուսիոյ կառավարութիւնք կատա-
րեալապէս անկեղծ են գործին առաջ-
քին առնելու բաղձանքնուն մէջ:

«Բանաւոր պատճառներ ունին
այս միջոցիս Արեւելեան խնդիրը զար-
թուցանել չուղելու, և ես ոմանց
առջի դիրտահաւան համարուիլ իսկ
յոնձն առնելով կը կրկնեմ թէ իմ
համոզումն այս է որ այդ տէրութիւնք
խաղաղութեան ու բարեկարգութեան
վերահաստատուելուն կը փափաքին
անկեղծաբար: Կիմանք լրագրերէն
թէ Աւստրիա՝ խռովեալ գաւառներ-
ը խաղաղեցնելու հիմ ըլլալիք ծրա-
դիր մը պիտի առաջարկէ: Ես դեռ
չեմ գիտեր այդ ծրագրին իմաստը,
և եթէ գիտնայի իսկ՝ չէի կրնար հոս
հրապարակային վիճարկութեան
ենթարկիլ: Բայց պէտք է ամենքդ
ալ հասկնաք որ օտար ազգի մը ներ-
քին գործերուն խառնուելու դժ-

ուարութիւնն աւելն ժամանակ խիստ
մեծ է:

Եթէ ընդհանուր խորհուրդներ
միայն տաք, հետեւեալք մը չծագիր.
բայց երբոր մանրամասնութեանց
մէջ մտնէք, իրաւունք կայ հաւա-
տաւոր թէ հինգ վեց խորհրդա-
տալ մէջ՝ իւրաքանչիւր չէք կրնար
հասկնալ, և եթէ համաձայնեք իսկ,
նշանաւոր օտարազգեաց մասնախոր-
հուրք մը շատ ձեռնհաս չէ Պետու-
թեան մը վարչութիւնն ուղղելու:
Ասկէց դատ՝ կրօնական և ազգային
հինուորաց ատերութեանց հետ գործ
ունենալն այնպիսի բան մ'է, որ
վերջին տարիճան զօրեղ և անկողմ
նակալ կառավարութիւն մը կը պա-
հանջէ: Բայց հանապազ օտարին խոր-
հուրդոյն և օժանդակութեան դիմող
կառավարութիւն մը չկրնար զօրեղ
ըլլալ, և եթէ իւր ձեռքը բաւական
զօրութիւն չունի տեղական տաւրու-
թիւնները զսպելու և տեղական օգ-
նութիւններէն անկախ ըլլալու, դժ-
ուարաւ կրնայ անկողմնակալ ըլլալ:
Օտար ազգեցութիւնը մինչև որ տա-
րիճան կրնայ օգտակարապէս գոր-
ծածուիլ՝ առանց ներքին պատասխա-
նատուութիւնը տկարացնելու: Օտար
տէրութեան մ'օտարամբեալ հպա-
տակներն ինչպէս կրնան հնազանդու-
թեան վերամիլ՝ առանց այս զգա-
ցումն յղանալու թէ օտարի պաշտ-
պանութեան ներքեւ կապրին: Ահա
առնեք են ներկայացեալ խնդրոց մի-
քանին, զորս կը ծանուցանեմ հոս՝
ոչ թէ նախամտածեալ եղբակացու-
թիւններ հանել տալու համար, այլ
որոշեալ զի կարենաք եւրոպական դի-
ւանագիտութեան ձեռնարկած գոր-
ծին ծանր դժուարութիւնները գնա-
հատել: Կրնաք փափաքիլ որ այս
ամենը բարի վախճան մ'ունենան.
բայց շատ դժուար ըլլալու չէ եթէ
ձեռք բերուած լուծումը մեր ուղա-
ծը չըլլայ:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 29 դեկտ.

Օրէնսներն արքայազանք յա-
ռաջիկայ երեսփոխանական ընտրու-
թեանց համար ընտրելի ըլլալէ ետ
կեցան, խորհելով որ Գաղղիոյ ներ-
կայ վիճակը միապետական վերանո-
րագում մը չեներ:

Ազգային ժողովոյ մէջ մամուլը վը-
րայ առաջարկեալ օրինաց վիճարու-
նութիւնը խիստ մերկայից է:

Փարիզ 30 դեկտ.

Մամուլ օրէնքն ընդունուեցաւ.
միանգամայն գլխաւոր քաղաքաց
մէջ պաշարման վիճակն հաստատ
պահուեցաւ:

Լոնտոն 30 դեկտ.

Ամերիկայի Միացեալ—Նահանգաց

կառավարութիւնը կը յայտարարէ
թէ տէրութեանց համար պատահու-
թիւն կայ Գաղղիոյ կղզւոյն ապստամ-
բութիւնը խաղաղեցնելու համար հա-
ւաքական միջնորդութիւն մ'ընելու:

Անգղիոյ Պանքան իւր գրամաղեղ-

չքն հարկւրին կի հանեց:

Փարիզ 30 դեկտ.

Ազգային ժողովը ձեռնարկեալ ան-
դամաց ընտրութեան համար յուն-
վար 30, երեսփոխանաց ընտրութեան
համար փետրվար 20, և այս երկու
ժողովոց գումարման համար մարտ
8 օրընց: Վաղն ալ մնայուն յաձ-
նաժողով մը պիտի ընտրէ:

Լոնտոն 31 դեկտ.

Տեղւոյս Ամերիկեան դեսպանը՝
Գաղղիոյ կղզւոյն մէջ արեւելահողմ-
թիւնը զարգեցնելու նպատակաւ
Եւրոպական տէրութեանց կողմէ հա-
ւաքական միջամտութեան մը վրայ
Անգղիոյ կառավարութեան կարծիքն
հարցնելով, Լորտ Տէրպի յայտնեց
թէ առ այժմ չկրնար վերջնական
պատասխան մը տալ:

Պէրիք 30 դեկտ.

Մօնիթօր լրագիրն՝ Եգիպտոսի
գերմանական հիւպատոսաց իրաւա-
ստութեան յառաջիկայ յունվար 1 էն
սկսեալ մինչև հինգ տարի սեղմանը
վերաբերեալ հրամանագիր մը հրա-
տարակեց:

Լոնտոն 30 դեկտ.

Պատ.	գում.	23 1/4
Գում.	863	30
»	1839	26 1/4
»	1871	41
»	1872	44 1/4
»	1873	25
Եղիպտ.	70	3/4
Անգլ.	բոն.	93 13/16

Լիւբլիու 30 դեկտ.

Բաւարի Միալիկ—Օրէնս	7 1/4	
»	Պայք Տօլերաճ	4 3/4
Երախտ	42000	հակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՏԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՄԱՐ

Կը ծանուցուի հաստատութեան
թէ յունվարի կործինն ետ մնալուն
և մեծ տէրութեանց կողմէ Բ. Դրան
ծանուցադիր մը տրուած ըլլալուն
վերաբերեալ գրոյցները բոլորովին
անհիմն են:

Բ. Դրան Տնօրէն տպագրական
17/29 դեկտ. 1875 տեսութեան

ՍՍՅԻՏ

ՊԱՇՏՏԱՅԻՆ ԱԶԳ

Մայրաքաղաքիս լրագրերէն ու-
մանք՝ հաստատութեան մասաց մէջ
չվտարութիւն ձգելով չաճ բնիկոյ նը-
պատակաւ՝ ժամանակէ մ'ի վեր յա-
ւելուածներ կը հանեն և իրեն կը-
ռեսը լուրեր վաճառել կուտան:

գիտմամբ ծանրակշիւութիւն տալով չնչին լուրերու, և այսպէս հասարակութիւնը կը խաբեն: Արդ, Տպագրական տեսչութիւնը կը ծանուցանէ լրագրաց թէ առանց Բ. Դրան հաւանութեանն այսուհետեւ յատկապէս վաճառելն արգելիւ է:

Տնօրէն
տպագրական տեսչութեան
17/29 դեկտ. 1875 ՍՍՅԻՏ

Կայսերական հրամանաւ՝
Հերոսէրի գաւառը Պոստիւլ կուսակալութենէն բաժնուելով զառ գաւառ եղաւ, և Բեռնի փաշան կուսակալ անուանեցաւ այս նոր գաւառին:

Ալեքանդրի կուսակալ Ահմէտ Համտի փաշան Շքաթարայի կուսակալ անուանեցաւ:

Լեւոնիւրի կուսակալ Մէհմէտ Բէֆէթ փաշան Ալեքանդրի կուսակալ անուանեցաւ:

Տրապիզոնի նախորդ կուսակալ Նուսրէթ փաշան Ատանայի կուսակալ անուանեցաւ:

Կիւմիւշեանի կառավարիչ Մահմուտ Սէֆա փաշան Գարահիսար-Շարքի կառավարիչ անուանեցաւ:

Տրապիզոնի երեւելիներէն Հիւսէյն Էֆէնտի Նիւմիւշեանէն կառավարիչ անուանեցաւ:

Ահմէտ Բէֆէթ պէյ Բ. Դրան Էփրաթ Միւտիլի անուանեցաւ:

Դարձեալ կայսերական հրամանաւ՝
Վերաքննութեան (խօսիմաֆ) տանին անդամանուանեցան:

Եղեռն-Կարա Բաշէն:
Լէպիզ Էֆէնտի, Միտհաթ պէյ, Վաստ Էֆէնտի, Նիւմիւշեանի Էֆէնտի:

Բաշապէն (հոգաւոր) Բաշէն:
Շէյխ Բամիզ Էֆէնտի, Նուրեան Էֆէնտի, Բոսնիական խիւսի Էֆէնտի, Լիւմի Էֆէնտի:

Առաքար-Բաշէն:
Յոհաննէս Էֆէնտի Սաքըղեան (երկրորդ նախագահ), Պոստ Էֆէնտի, Կարապետ Էֆէնտի:

Առաքար-Բաշէն:
Կերպով կազմուեցաւ:

Ա. Դարաբան:
Նախագահ՝ Պետրոս Էֆէնտի Գուլստան. անդամք՝ Մէհմէտ պէյ և Կոստանդ Էֆէնտի:

Բ. Դարաբան:
Նախագահ՝ Րիֆաթ պէյ. անդամք՝ Հիւմի Էֆէնտի և Թադուր Էֆէնտի:

Գ. Դարաբան:
Նախագահ՝ Սուրենեան Յոհաննէս Էֆէնտի. անդամք՝ Հաճի Րիֆաթ Էֆէնտի և Յովսէփեան Յոհաննէս Էֆէնտի:

Դ. Դարաբան:
Նախագահ՝ Հասան պէյ. անդամք՝ Լիւմիան Էֆէնտի:

Ե. Դարաբան:
Նախագահ՝ Եօրիստէս Էֆէնտի. անդամք՝ Ալի պէյ և Ե. Տիգրան Էֆէնտի:

Տպագրական տեսչութեան կողմէ հրատարակուող պաշտօնական հրամանագրով մը՝ Օրագիր լրագիրը բոլորովին խախտեցաւ:

Այս ցաւալի խառնութեան պատճառն լիչեալ թերթին հինգշաբթի առաջ թիւով հետեւեալ լուրը տուած ըլլան է. «Կըսուի թէ այսօր կամ վաղը Գորատարի գէմ պատերազմ պիտի հրատարակուի» Բ. Դրան հրամանագրով կըսէ թէ այս լուրը հիմնովին սուտ ըլլալով, այսպիսի կարեւոր իրողութիւն մը առանց տպագրական տեսչութեան հրատարակած չէ:

Լուր իրողութիւն մը առանց տպագրական տեսչութեանն ստուգելու հրատարակած է Օրագիրը:

Օսմանեան Գրէտի Եֆէնտի պան. քայլին տնօրէն խորհուրդը 1872 թ. գանձատնային (Պոստիւլ Թիւրք) տէրերը չարքաւթի օրն 'ի յապի հրաւիրելով, երկար խորհրդակցութենէ ու վիճարկումէն ետեւ համաձայնութեամբ որոշեցին որ վերջին հոկտ. 6 թ. կայսերական հրամանագրով միմիայն տէրութեան ներքին և արտաքին պարտուց տակտին և գլխավորին վերաբերեալ ըլլալով, 1872 թ. գանձատնային չկրնար երբէք պատկանիլ, որովհետեւ ասոնք տարեկան գլխավոր չունին այլ սորոշ և իրարու մօտ պայմանաժամով վճարելի են, և այս պայմանաւ միայն կ'ընտան:

Հետեւորաւ լիչեալ գանձատնային տնօրէն նկատմամբ եղած տնօրէնութեան գէմ բողոքելով, կ'ընալ պայմանագրութեան համեմատ իրենց իրաւունքները պաշտպանելու. գործը Գուշտի Եֆէնտի տնօրէն խորհրդին յանձնեցին, և անոր աշակցելու համար փոխտնօրէնութիւն մը կազմեցին հետեւեալ անձերէն՝ Պ. Պ. Գուլստ, Հիւմիլի, Զաւթ, Մաքսուտ Սեպուհ Էֆէնտի, Թ. Մաքսուտ Սեպուհ Էֆէնտի:

Այս գիշեր ժամ 9 ին միջոցները մայրաքաղաքիս Սարահիսար-Պաշը ըստած թաղը հրդեհ պատահելով 15 ի չափ տուն և խանութ պրեցաւ:

ԸՆԹԱՅԻ ՍՐԺԵԹԻՅՈՅ	
Կ. Պոստիւլ 49 դեկ.	
Ա. Եփրատի Եֆէնտի Բաշէն	3, 7
Կ. Պոստիւլ Գուշտի Եֆէնտի	4 12
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	4 5
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	58 1/2
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	434
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	128
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	126
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	41
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	124
Կ. Պոստիւլ Զաւթի Եֆէնտի	2 15

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

Բարենորոգ մանց վերջին հրովարտակին համեմատ զինուորական տըրոյ բաշխման և հաւաքման ինչպէս նաեւ անշտիմահա որոշ ժամանակահատիւներ կարգադրութեան համար, Բարձր. Մեծ-Եղարաքը՝ Գործող իր մեծ ժողովը որոշմամբ՝ Պատրիարքարանի կարծիքը խնդրեց յատուկ ծրագրերով:

Բաշաքական ժողովը ալ լիչեալ ծրագրերը պատրաստելու համար մասնաժողով մը կազմեց, որոյ անդամք են՝

- Վահագն Ապրո Ս. Էֆէնտի
 - Ս. Պաշտիւլեան Սարգիս Էֆ.
 - Փառապետ Կարապետ
 - Մամիկոնեան Միքայէլ
- Յաւաքիկայ երկուշաբթի սոյն մասնաժողովը իւր առաջին նիստը պիտի ընէ Ս. Պատրիարք հօր նախագահութեամբ:

* Անցեալ շաբթու լրագրաց խառն գիրքերը Բ. Գուշտի կանչուելով պատուէր տալուն որ տէրութեան վերաբերեալ կարեւոր իրողութիւն մը հրատարակել առաջ տպագրական տեսչութեանն ստուգել:

Կրօնական ժողովը անդամ Ամբրոսիոս վարդապետի նկատմամբ Բաղ. ժողովը անդամը մեծ մասին կողմէ առ Սրբազան Պատրիարքն մատուցեալ բողոքարկին վրայ, Բաղ. ժողովը որոշեց որ մինչեւ սոյն խորհրդին կարգադրութիւնը՝ յետոյ ժողովը նիստերն անհաճման կերպով յետաձգուին և Բաղ. ժողովը գուժմորի շարունակարար:

Երջնկայի Առաջնորդական խորհրդին վրայ թէ՛ Բ. Գուշտի և թէ՛ վիճակէն եկած դրութիւնները նկատողութեան առնելով՝ Բաղ. ժողովը որոշեց Բարեբր. և առաջնորդ. Գեր. Գրիգոր Եպիսկոպոսը քննիչ զրկել, և քննութեան արդիւնքն ուստիալէ ետեւ զարժանք տնօրինել:

Այս որոշումը Սրբազան Պատրիարք հօր պիտի հաղորդուի, որպէս զի Կրօն. ժողովէն ալ անցնելէ ետեւ գործադրէ:

Եւրոպիոյ քաղաքակրթեալ աղագաց և նոյն իսկ մայրաքաղաքիս Եւրոպացի բնակիչաց մէջ 'ի գործ գըրուած սովորութեան համեմատ, քանի մը պատուարժան աղջկայինք խորհած են՝ յառաջիկայ Ս. Ծննդեան տօնին առթիւ Ս. Փրկչի հիւանդանոցին մէկ մէկ արձաթ մէճիտիէ նուիրելու՝ այցելութեան պարտելու հարկէն ազատ մնալ:

Այս նպատակաւ յատուկ տեսարակ մը բացուած է Շապի խանր թիւ 4 սենեակը, ուր ուղղով մէճիտիէ մը տալով իւր անունը նշանակել կուտայ, և այսպէս թէ՛ ինքն աղատ կըլլայ Ծննդեան օրերը տունէ տուն կամ թաղէ թաղ այցելութեան պարտելու հարկէն, և թէ՛ աղջկային հիւանդանոցին մարդասիրական նպատակով՝ քաղաքի Աւերդէ քան թէ վերջիւնեալ տուժարին մէջ արձանագրեալ անձանց անունները պիտի հրատարակուին լրագրաց միջոցաւ:

Կը լսենք թէ Եֆէնտի գաւառի, Գուշտի Եֆէնտի և Կէտիլի բաշայի Թաղական խորհուրդներն իրարու հետ կը խորհրդակցին եղեր զպրոցական միութիւն մը կազմել, և Սայր եկեղեցւոյ վարժարանը կեդրոնական ուսումնարանի վերածելով, միւս գըպրոցները պարզ նիստերով արտին ընել:

Այս խորհուրդն՝ եթէ ստացէ՛ զովութեան արժանի է՝ վասն զի տարակոյս չկայ թէ ինքնակամ մէկ թաղի մէջ չորս ուսումնական գըպրոց ունենալու, չորսն ալ թերի և աղարկուն վիճակի մէջ, աւելի իմաստութիւն է թաղին գրամական կարգութիւնը մէկ ուսումնարանի նուիրել, որով բնականաբար աւելի կ'առաջանայ և աւելի արդիւնաւոր վիճակի մը կրնայ ստանալ թաղին մանկանց ուսումնական կրթութիւնը: Մեղ տրուած տեղեկութեան նոյնիստ, Եֆէնտի Գուշտի Եֆէնտի և Կէտիլի փաշայի թաղերն ամսական 8500 զըշ գըպրոցական ծախք ունին: Սայր վարժարանն ալ 10000 զըշ համագումար 18500 զըշ այս գումարին 4500ն եթէ երեք նախակրթարաններուն սահմանուի, կեդրոնական վարժարանին կը մնայ 14000 զըշ, որ շատ իսկ է գայն կատարեալ ուսումնարան մ'ընելու, և թաղին ժողովրդեան բազմանքն ու պիտոյքը լիովին գոհացնելու:

Կը մտախնդրէ որ այս օգտաւետ խորհուրդը կարենայ յաջողութեամբ արդիւնաւորել և ուրիշ իրողութեւրացի թաղերու ալ նմանաձեւի օրինակ մ'ըլլալ:

ՂԱԼԱԹԻՈՅ ԱՋԴԱՆՈՒՄԻ ԽՈՐԱԿԻՆ ԵՎԱՐԱԴԻՐԸ

... Խօսադիր Տնր:

Անցեալ օրը Խօսադիր Տնր, Բաղ. ժողովը այն աղմուկով ժամն անցնելէ ետեւ, երբ ամեն մարդ իր սրտմտութեամբ ցրուեցան անիծելով այն քանի մը շահու մոլ խաղարարներն՝ որ այն օրուան ժողովին անգործութեան պատճառ եղան, և երբ ողջամիտ երեւոյթանք և պարկեշտ ունեղիւրդ մեկնած ժամանակին պիտի անցնէ կը յայտնէին այն կրօնականին զէմ, որ լրբութիւնն ու անպատկառութիւնն առաքինութեան տեղ դրած է, ևս՝ առաքելութեան՝ եկեղեցւոյ բակին մէջ կը ճեմէ խորհելով թէ ո՞վ արդեօք յաղթանակեց, խմբակը թէ՛ երեւոյթանք, թէ՛ ահա անսոյ հաղթանակ քանի մը կարծադրեալ և երկարապիտ անձինք, որք ետեւեղալու դէմքով և խելով գոչելով իրարու ետեւ եկեղեցւոյն քաղ. խորհրդոյ սենեակը մտան: Առանց ունկնդրել ըլլալու մէկմէկ ըսածին՝ ամենքն ալ կը խօսէին բարձր ու գոռ ձայնով, մերթ յառաջ յանկարծ ոտքի վրայ ցատկելով, մերթ ևս բռնել սեղանին զարնելով և ոտքերին տրոփելով, այնպէս որ սենեակը կը գըգըկէր ստոնց աղմուկէն ու շարժմանը:

Տնր միջոցին եկեղեցւոյ վերի դուռնէն անցնաւ մարդ մը ներս մտաւ, սեւ ընչացոյի ձեռքը հովանոց մը բռնած, ձիւղ քովքով ծաւալ, և միշտ առջեւ նայելով՝ կարծես թէ՛ փրկստիպական խորին մոտածութեանց մէջ ընկղմած էր, բայց զէմքին գոհարութիւնը կը ցուցնէր որ Զոյլ մ'էր: Ուղղակի գնաց նոյն սենեակը մտաւ: Մէկէն բազմութեան խառնաշփոթ ձայները միանալով զոչեցին, «Օ՛րարով եկար, Էֆէնտի, ինչո՞ւ ուշ մնացիր»:

— Կարծեմ սխալած չեմ ժաման վրայ. ժողովը դեռ նոր մեկնած ըլլալու է, պատահականեց նոյնիստ, Գետիլ յարեմ, «Ե՛նչ ըրիք նայիք, յաջողեցա՞ք ժողովը խառնել, խառնեցիք Սոսմ. վերադնեալ յողաւանցի քուսարկութիւնը, աւերելիք Սիմոն եպիսկոպոսի տեղապահական ընտրութիւնը, մէջ ձգեցիք Սայր Խօսադիրը»:

— Ամէնքը մէկ բերան «Սոսմ. այո՛, դոչեցին, առանց ամենն ալ կատարելիք նստեցիք որ պատմենք»:

Այն ատեն խառնակ երկարապիտ անդամներէն մէկը որ գեպին գէմք մ'ուռնէր և օձի աչերու պէս տըքեր, և որուն համար հոն բակը պրոքսոլ երկտասարդ մ'ըսաւ թէ շայց Պետրոս Արարիկն է, աչերը փայտաղեղով, տիրաները սեղմութեամբ և ամեն մէկ բառերը չեղաւորով՝ այն օրուան անցքերուն պատմութիւնն ըրաւ. և թէ ինչու բառական ճարտարութեամբ կը նկարագրէր, բայց և այնպէս ընկերները մերթ ընդ մերթ կը միջամտէին, և անոր մոտցած կամ պատկառութեամբ մանր կ'աներ կը լրացնէին իրենց զխաղաղութեամբ հանդերձ:

— Սակայն ինչու բառական և երկար պատմութեան հարցերը, և ինչպէս կարող չեզան ձեր հնարքները արդ, որքան տալու էն այդ Էֆէնտիները:

— Ժամանակ չըտուել որ: Արդէն կըրցեր էինք յաջողեցինք որ տեղապահ ընտրութեան տեղեկագիրն ընդհ. ժողովին բերեն, և բերին, մինչեւ կատարեալապէս իրաւունք տրուած էր Պատրիարքին որ իրեն կողմէն ո՞վ սեղմութեամբ ընտրուի, խառն ժողովը ալ վաւերացուցած էր: Սահմանադրութիւնը բան մը չէր թողած մեզի:

— Այդ կէտին վրայ զխոզութիւն ընող չեղաւ:

— Ժամանակ չը տուէր որ: Մէկս Սայր խնդրել մէջ նետեցինք, մէկս արձանագրութեան օրինակ մը մէջ բերինք, Սիմոն եպիսկոպոսն ամբաստանութեան տակ զրկել, և ամենքս 'ի միասին՝ Սայր առ թուող իրաւանց պաշտպանութիւնը պատահեց: Սրանք էր նաեւ այն կէտը թէ Եւրոպացի մը մէջ կաթողիկոսութիւն հաստատելու խորհուրդը ընդունելու կարէն եղեր:

— Ըսիք տակից, պատմո՞ւ, զոչեց Զոյլ ուրախութեամբ:

